

դիա՝ փրանկիսկոս Առաջին եղաւ առաջին թագաւորը՝ որ մետաքսէ գուրպայ գործածեց. Անգղիա՝ Եղիսաբէթ թագուհին իբր մեծայարգի ընծայ մը զոյգ մը մետաքսէ գուրպայ ընդունեցաւ տիկնոջէ մը :

Լուդովիկոս ԺԴին ժամանակը՝ ապուրի պնակները անձանօթ էին : Ապուրը և ուրիշ ինչևիցէ հեղանիւթ ուտելիք, սկըտեղի մը մէջ կը դրուէին երկու հոգւոյ համար :

Բարիզու փողոցաց քարայտակը առջի անգամ 1184ին եղաւ . մինչև այն ժամանակ խողերը աղատաբար ճամբաները կը պարտէին տղմի մէջ թաւալելով . և ասոր դարմանը չմտածուեցաւ՝ մինչև որ երիտասարդն փիլիպպոս թագաւոր՝ ձիէն վար իյնալով սաստիկ վիրաւորեցաւ, ձիուն ոտից մէջ խող մը արգիլուելով :

Բարիզու առաջին լուակիքը 1510ին շինուեցաւ :

Վեշտասաներորդ դարուն սկիզբները եղաւ որ այս քաղքիս ճամբաները սկսան գիշեր ատեն ճրագ վառել, երբ քաղքին ոստիկանութիւնը հրաման հանեց որ փողոցին վրայ նայող պատուհաններուն մէջ ճրագ վառուի : Լապտերներով լուսաւորութիւնը հազիւ թէ ժը դարուն վերջերը մտաւ :

Վեշտասաներորդ դարուն ատենները անանկ քիչ էին տան կահկարասիքը, որ երբ թագաւորը՝ վիրաւորուած ֆոլինեին տեսնալու գնաց, արկղի մը վրայ հարկ եղաւ որ նստի : Լուդովիկոս ԺԴին թագաւորութեան ժամանակ, հոչակաւոր Ռամպուլիիէ պալատին սըրահներուն մէջ, մեծամեծները գետնի վրայ կը նստէին : Պատերը մերկ էին, և Ռամպուլիիէ մարզիզուհին եղաւ առջինը որ երկնագոյն կերպասով ծածկեց զանոնք : Հայելիք գրեթէ անձանօթ էին . Լուվրի մէջ կատարինէ տէ Մէտիչիի հայելին կը պահուի, երենոսէ չըրջանակով և հազիւ 33 հարիւրամեղը բարձրութեամբ :

Հենրիկոս Դին թագաւորութեան ժամանակը մատուրներով կ'ուտէին,

ըստ արդի սովորութեան արևելեայց : Սենեակները ջերմացրնելու սովորութիւն այնչափ չկար, և գլխաւորապէս անկողնոյ սենեակը և ոչ վառարան ունէր . անգղիական խորհրդարանին համար ալ նոյնը զուրցելու է, որ միայն երկու խոշոր դեղնագոյն մոմերու լուսով կը լուսաւորուէին : Իշխանաւորը տաքնալու համար թաթպաններ ունէին՝ որոնց մէջ թևերնին կը ծածկէին . իսկ երբ ցուրտը սաստիկ ըլլար՝ ժողովները կը դադրեցընէին :

ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐԶՈՒԹԵԱՆ

(Տես էրես 90.)

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Ի սմին աւուր յիշատակ է երկրորդ աւուր արարչութեան Աստուծոյ : Յաւուր յորում ասաց Աստուած, թէ Եղիցի հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ և ջուրցդ, և եղև այնպէս : Յերկրորդումս աւուր բաժանեաց և փեռեկտեաց Աստուած զբազմութիւն ջուրցն՝ որ ծածկեալ ունէր զերկիր . և զկէս ջրոյն յետ տարեալ հեռացոյց 'ի վեց դիմաց, 'ի վեր և 'ի վայր, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց և 'ի թիկանց : Եւ արար զկապոյտ երկինդ որ ասի հաստատութիւն, և նոյն ձևովն յամենայն կողմանց ընդգէմ ջրոյն՝ պարզեաց զնա, և պատառեալ պատեցին երկրեանն զաշխարհաւս . և եղև այն յօգուտ առ ք իրս : Նախ զի զծանրութիւն երկրիս թեթևացոյց, և ք . զի զկիզանօղ զօրութիւն հրեղէն երկնիցն արգել փակեաց 'ի վեր : Եւ է հրեղէն երկինն և ջրեղէն կամարն և հաստատութիւնն 'ի վեր և 'ի վայր, և յամենայն կողմանց հեռացեալ յերկրէ, և հողմով խառնեալ ընթանան անդադար, հարթ և զուգակշիռ հաւասար, ոչ տեղի ինչ ձանձաղ, և ոչ տեղի ինչ թանձրագոյն : Եւ այնպէս երեք երկինք հաւասարեալ 'ի շուրջ զան և պատեն զաշխարհաւս, 'ի վեր և 'ի վայր մաղ-

լազ առեալ, և իւրեանց շրջադայու-  
թեամբն զերկիրս 'ի կայի պահեն: Եւ  
կոչեցաւ հաստատութիւն՝ առ 'ի փա-  
րատել 'ի մտաց մարդկան զահ փլանե-  
լոյն: Բայց սուրբն Բարսեղ ասէ վասն  
վերին լուսեղէն երկնիցն՝ թէ այն հաս-  
տատ և անշարժ կայ. և է ինքն յօդոյ և  
'ի հրոյ: Եւ այլք ասեն 'ի վարդապե-  
տաց, թէ հինգերորդ տարր է, որպէս և  
եթեր հաստատութեանդ որ է կապոյտ  
երկինդ 'ի ներքոյ ջրեղէն կամարիդ:  
Վասն որոյ ասէ Դաւիթ. Զուրբ որ 'ի  
վեր է քան զերկինս: Եւ այսմ օրինակ  
առ զհաւի ձուն. վերին լուսեղէն եր-  
կինն՝ որպէս կեճեպ ձուին. և ջրեղէն  
կամարն որպէս զայն բարակ մղրղնա-  
տեսակ փառ ձուին, որ յոմանց թա-  
ղանթ ասի: Եւ հաստատութիւնդ որ-  
պէս զճրի սպիտակուցն, և աշխարհս  
տարրական գնդին 'ի միջին՝ որպէս  
զղեղնուցն: Այսպէս տես մտօրդ զկարդ  
երկնիցն և զգիրս տարերացն: Զհուրն՝  
կեճեպին նման, և զբարակ թաղանթն՝  
օդոյն, սպիտակուցն՝ ջրոյն, զի հոզն 'ի  
մէջ է յամենայն կողմանց բոլոր գըն-  
դաձև որպէս զձու: Եւ է դորժ երկրորդ  
աւուրս ջրեղէն կամարն 'ի վեց դիմաց, և  
հաստատութիւնդ որ է կապոյտ երկինդ  
զհետ նորա և ոչ մերձակայ, այլ 'ի զատ  
ամբաւ հեռաւորութեամբ 'ի փառս ա-  
րարչին:

Եւ ասա 'ի սոյն երկրորդումն ա-  
ւուրս կարգեցաւ տօնել հրեշտակացն  
և հրեշտակապետացն և ամենայն երկ-  
նային զօրացն Աստուծոյ ինն դասուցն.  
Աթուոցն, Քերովբէիցն, և Սերովբէիցն:  
Տերութեանցն, Զօրութեանց, և Իշխա-  
նութեանցն, Պետացն: Հրեշտակապե-  
տացն, և Հրեշտակացն: Վասն զի յամ-  
բարտաւանելն և անկանիլն սաղայելի  
և զօրացն դիւաց, նոքա կային մնային  
ահիւ մեծաւ 'ի հպատակութիւն փա-  
ռացն Աստուծոյ: Վասն որոյ պատուե-  
ցան յԱստուծոյ և պատուին տօնիւ 'ի  
սուրբ եկեղեցւոյ, որպէս թէ շնորհա-  
կալու լինել երախտեաց նոցա. որք են  
պահապանք ազգի մարդկան, և բա-  
նակք տեառն շուրջ զերկիւղածովք Աս-

տուծոյ՝ որ անդադար աղաչեն զԱս-  
տուած վասն մարդկան և ասեն. Ողոր-  
մեա՛, դու ստեղծեր, մի կորուսաներ. և  
զգործս ձեռաց քոց մի անտես առներ:

ԵՐՐՈՐԴ ՕՐ

Յայսմ աւուր յիշատակ է երրորդ  
աւուր արարչութեան Աստուծոյ. յոր-  
ում աւուր ասաց Աստուած թէ՛ ժո-  
ղովեսցին ջուրք 'ի ժողովս իւրեանց, և  
երևեսցի ցամաքն. և կոչեաց զցամաքն  
երկիր:

Եւ դիտելի է, զի ցամաքն ոչ է ա-  
նուն երկրի: Այլ պատահումն է որպէս  
և ամենայն անխոնաւ իրաց ցամաք ա-  
սի: Եւ այն որ ասի երկիր՝ վասն է պատ-  
ճառաց. նախ զի թ երկիրս ծայր ունի,  
երկու երկայն զարևելս և զարևմուտս,  
և երկու 'ի լայն զհիւսիս և զհարաւ:  
Եւ զարձեալ երկիր ասի, զի կրական  
է, որ կրէ յինքեան զջուրն համատա-  
րած՝ և զորս գոյանայ 'ի ջրոյ և 'ի հողոյ.  
և զարձեալ մեռանին, և 'ի հողոյ պար-  
տակին մարդ՝ և անասունք, բոյսք և  
զալարք, խոտք և բանջարք, ծառք և  
տունկք: Այսպիկ ամենայն 'ի վերայ եր-  
կրի յօրանան. և զարձեալ յերկիր կը-  
րին և կորնչին: Եւ չորրորդ պատճառն  
այս է երկիր ասելոյն՝ զի միշտ յերեք-  
ման և 'ի տատանման կան երկրայինքս,  
'ի մէջ նեղութեանց և վշտաց և փորձա-  
նաց: Ըստ որում և ասէ Պօղոս՝ թէ Եր-  
կիր և կաց 'ի կասկածի գուցէ անկանի-  
ցիս: Որպէս և աշխարհ ասելն այլ շնոյն  
նշանակէ. որ աշխար և սուգ է. և կոծ  
և աղէտ ողբոց. և հովիտ վշտաց և տըր-  
տմութեան:

Եւ զժողովն ջուրցն՝ կոչեաց ծովս:  
Տես զի ծովս ասէ, և ոչ ծով: Եւ այս  
վասն երկոյ պատճառաց: Նախ զի ցու-  
ցանէ զխորչս և զգոգս, զականջս և ըզ-  
ժոցս ծովուց բազմաց: Եւ զարձեալ  
ծովս ասի՝ զի հանապաղ 'ի ծիւման և  
'ի շաչման է, ծաւալի և շարժի: Զի բե-  
րանացեալք առ իրեարս ձօճեն և ծա-  
ւալին ծալմամբ ալեացն: Եւ է առաջին  
և արտաքին ծով յեզր աշխարհիս, որ

կոչի Ովկիանոս . զի ոչ գոյ 'ի նմա կեն-  
դանի , և ոչ նաւ կարէ կոխել զնա . զի  
անխորշ է և անլեառն , հարթայատակ  
և հաւասար կոկեալ և ողորկեալ հողն  
'ի ներքեն ջրոյն . և է եզր աշխարհի .  
ուր ոչ գոյ հող 'ի ներքե ջրոյն . այլ հողմ  
է սաստիկ յատակ ջրոյն՝ որ խլէ թա-  
փոտ , և հանէ երազընթաց արշաւամբ  
զմերձեցեալն 'ի նա : Իսկ որ յայս կոյս  
Քեռինոս կղզոյն է ծովս՝ Անդլընդական  
կոչի . քան զի Քեռինոսն բոլորածիր  
կղզի է 'ի մէջ ք ծովուցն բոլորեալ շուրջ  
զերկրաւս : Յորում են լեռնակերպ գա-  
ղանք ահագինք և վիշապք անճոռնիք  
և վիթխարիք . որ 'ի խառնակութենէ  
նոցա քուհոտոյն՝ զոր առեալ հողմոց  
և բերեալ արկանեն 'ի վերայ երկրի , և  
յայնմանէ լինին ցաւք 'ի մարդ և յա-  
նասունք , 'ի պտուղս և 'ի վաստակս , և  
ամենայն ցաւք աշխարհիս անտի պա-  
տահին : Իսկ ծովն Անդլընդայինն որ յայս  
կոյս կղզոյն է՝ զետին է լեռնամէջք և  
խորածորք . վասն որոյ և զետեղեալ են  
ջուրքն , և անփնաս ծնանին կենդանիս  
և սնուցանեն . այլ և նաւորդք գնան 'ի  
վերայ վստահացեալք , և շուրջ զեզերօր  
նորա բնակին մարդիկ բարեխառնեալք  
և յաջողեալք . վասն որոյ և ասի Անդ-  
լընդական , զի բնակին անդ կենդանիք  
խնդամտական զքոսամբ : Եւ յայս կոյս  
Անդլընդական ծովուն բաժանին ք ծովք  
եզերովք և միջոցովք , խորշովք և ծո-  
ցովք 'ի մէջ աշխարհիս : Արևելայինն և  
Արևմտայինն Հիւսիւսայինն և Հարա-  
ւայինն : Բայց Արիստոտէլ ովկիանոս  
զայս ասէ՝ որ շուրջ զցամաքաւս է : Որ-  
պէս թէ հիանայ վասն կենդանեացն  
բազմութեան , որ անդ կան և յորա-  
նան : Ասէ , թէ զարմանք է թէ ո՞վ կայ  
'ի նոսա , զորս արարիչն միայն գիտէ :  
Եւ զայն որ յայնկոյս Քեռինոս կղզոյն՝  
Անդլընդական կոչէ , այսինքն թէ , ան-  
կար է ումեք անդ լինել կենդանի , զի  
անյատակ է : Եւ ետես Աստուած զի  
բարի է : Բարի է ծով քստ տեսութեան  
Աստուծոյ 'ի խաղաղ ժամու , ծիծաղե-  
լով 'ի խաղաղասիդ ալիան՝ վէտս վէտս  
հաճոյ աչաց հայելով : Եւ սուքատաց

բազում հնարս կենաց տալով 'ի դար-  
մանս պիտոյից 'ի պատճառս նաւորդաց՝  
որ տանին և բերեն զպիտոյս աշխար-  
հաց . այլ և 'ի գիւտս մարգարտաց և աղ-  
նիւ ոսկոյ : Բարի և գեղեցիկ է ծով հիւ-  
րամեծար և ասպնջական գետոյ , զորս  
առեալ և անդրէն հանէ ընդ ծործորս  
և ընդ ստորոտս լերանց : Գարձեալ կո-  
չեցաւ ծով . զի ծարմամբ և ծաւարմամբ  
այլայլի միշտ , և զեզեալ սահմանն իւր  
յարարչէն ոչ թողու , պատկառելով 'ի  
դրացւոյն իւրմէ 'ի չնչին աւազէն :

Եւ ասաց Աստուած՝ բղխեսցէ երկիր  
զբանջար խոտոյ . յորոյ հրամանէ բու-  
սան ծառք և տունկք , բոյսք և դալարք ,  
կատարեալ սերմամբք և հասուն մրր-  
գօք . ընդ որս և դրախտն Աղամայ : Այս  
է զործ երրորդ աւուրն՝ ժողովել ջուրցն  
'ի ծովսն . և ցամաքին երկրի . բլխումն  
բուսոց և տնկոց և ծառոց : Եւ զիսորդ  
ասէ թէ՝ իւրաքանչիւր սերմն 'ի նմին .  
զի եզէգան , սիզոյ և զափրանի և թար-  
խունի , և այլոց բազմաց սերմն ոչ է 'ի  
ծայրսն , այլ յարմատն կայ . և չէ ինչ  
բոյս և տունկ որ չիցէ ինչ զօրութիւն  
սերման առ ծայրսն կամ առ արմատն .  
և յայտ անտի է , զի ամեն տնկեն և  
ճիւղ և տերե պատրուսեն՝ և կապեալ  
արմատանայ : Եւ գիտելի է զի ընդ պի-  
տանի բուսոցն որ զօրութիւն ունին դե-  
ղոց և սպեղինաց և կերակրոց , բուսան  
վնասակարք և մահարարք : Զի ոչ թէ  
ամենայն 'ի պէտս ուտելոյ տնկեալ եղև ,  
այլ և 'ի լրումն աշխարհի և յայլ ինչ  
պէտս , թէպէտ և մեք անգիտանամք :  
Որպէս լորք և հոբալք ուտեն զլերու-  
րոսն և զմեկսնիոնն՝ և ոչ վնասին ,  
նուրբ սոսորդ ունելով և նեղ խածիս .  
որ նախ քան զազգելն զցրտութիւնն՝  
հալեն և ծրտեն . զի ինքեանք տաք են  
բնութեամբն՝ այլ և բժիշկք 'ի պէտս  
բժշկութեան առնուն 'ի փառս արար-  
չին : Այլ և գիտելի է , զի ընդ զգալի  
ծառոց և տնկոց տնկեաց կամք արար-  
չին զտունկս իմանալիս , այսինքն զգասս  
արդարոցն և զմարգարէիցն , որպէս և  
ասէն Պօղոս թէ՝ յառաջ քան զլինելն  
աշխարհիս ընտրեաց զմեզ Աստուած :

Եւ որպէս ընտրութիւն սուրբ առաքե-  
լոցն՝ ՚ի հինգերորդ աւուրն եղև ընդ  
Նրայնոցն և ընդ յօղայնոցն, այսպէս և  
ընտրութիւն սուրբ մարգարէիցն յեր-  
րորդումն աւուր եղև ընդ բուսոց և ընդ  
տնկոց. որպէս և ասէ սուրբ հայրա-  
պետն մեր Ներսէս Շնորհալին թէ՛

Ընդ ծառոց երկրի զգաւեաց  
Տնկեաց և զտունկսն իմանալեաց :

Եւ տես զի մարգարէքն յառաջ էին քան  
զՔրիստոս, և առաքեալքն յետոյ. այս-  
պէս և զընտրութիւնն նոցին նկարեաց  
Աստուած արարչութեամբն յերրորդ ա-  
ւուրս ընդ ծառոցն զմարգարէս, և ՚ի  
չորրորդում աւուր ընդ լուսաւորացն ՚ի  
յամանս լոյսն Քրիստոս ՚ի յարգանդ  
կուսին Մարիամն : Ուստի ծագեցաւ  
մեզ արեգակն ՚ի բարձանց՝ լուսաւոր  
առնել ըղխաւար մեր : Եւ ընդ Նրայնոցս  
ստեղծուածոց՝ զսուրբ առաքեալսն, որք  
՚ի ծովէ աշխարհիս երկնաւորք եղեն  
ըստ նմանութեան թռչնոց. որք ՚ի ծովէ  
Նուրց ՚ի յօղս ելանեն ՚ի փառս Քրիս-  
տոսի Աստուծոյ մերոյ :

**ՉՈՐՐՈՐԴ ՕՐ**

Յայսմ աւուր գարնանամուտ է, և  
յիշատակ չորրորդ աւուր արարչութեն  
Աստուծոյ : Յորում աւուր ասաց Աս-  
տուած. Եղիցին լուսաւորք ՚ի հաստա-  
տութիւն երկնից լուսաւոր լինել երկրի :  
Լոյսն համասփիւռ՝ որ խզումն էր ՚ի լու-  
սեղէն երկնիցն, յառաջին աւուրն ՚ի  
նախնիկէտն ցրուեալ տարածեցաւ ՚ի վե-  
րայ Նրոյն զչափ աւուրն ժամս երկոտա-  
սան. և յերեկոյին կցաւ յարիին ուստի  
խղաւ յառաւօտին : Եւ կեցեալ այնպէս  
ժամս երկոտասան կից ՚ի յարփին : Զի  
գարնանային էր ժամանակն, և տիւն և  
գիշերն հասարակ էր. այս է՝ կէս էր միա-  
պէս. և յերկու աւուրն դարձեալ տարա-  
ծեցաւ լոյսն ՚ի վերայ Նուրցն զցերեկն ա-  
մենայն, ժամս երկոտասան. և զցայզն՝  
որ է գիշերն՝ հաւաքեալ և պնդեալ կա-

յացաւ ՚ի հիւսիսային կողմն ծածկեալ  
անհալ ամպով. որով եղև գիշեր : Իսկ  
յերրորդ աւուր յերեկոյին ժողովեալ  
գնդեցաւ ՚ի վերայ դրախտին : Յայս և  
րեք աւուրս աննիւթ և անմարմին եկաց  
լոյսն համատարած ՚ի տիպ երեքանձ.  
Նեայ լուսոյ աստուածութեն : Եւ ապա՝ ՚ի  
չորրորդում աւուր արար Աստուած՝ ա-  
մանս օղեղէնս արեգականն լուսնի և  
աստեղացն : Եւ էառ զպարզ՝ և զպայ-  
ծառ զվճիտ և զհրաշատ լոյսն, և եղ  
յաման արեգականն. և զայլ միջա-  
կանան և զիգագոյնան՝ էարկ յաման  
լուսնին. և զայլ նուազան՝ եղ յամանս  
աստեղացն. և զարգարեաց զերեսս  
երկնից լուսաւորք, այլ և զերեսս եր-  
կրի բուսօք և տնկօք :

Եւ ասաց Աստուած վասն լուսաւո-  
րացն, թէ եղիցին ՚ի նշանս և ՚ի ժա-  
մանակս, յօրս և ՚ի տարիս : Նշանք թօ-  
նից և երաշտից երևին ՚ի խոցուածս ա-  
րեգականն և յեղջիւրս լուսնին : Մա-  
նաւանդ ՚ի բակ առնուլն, որպէս և  
տէրն իսկ ասէ. Յորժամ տեսանիցէք  
ամպ շողացեալ յարևմտից, որ է խո-  
ցուածք ՚ի մուտս արեգականն, անձրև  
գայ : Եւ առաւօտին թէ ամպն խանձի,  
նշան է թօնից : Եւ երեկոյին կարմրա-  
նալն՝ պարզոյ :

Եւ նաւորդք նշանօք աստեղաց ուղ-  
ղեն զնաւսն ՚ի գիշերի. մուրեալքն ՚ի  
ցերեկի : Այլ և իւրոյ գալոյն Քրիստոս  
գնչանն ՚ի նոցանէ ետ. որպէս և ասէ.  
Թէ Եղիցի նշան յարեգակն և ՚ի լու-  
սինն և յաստեղս :

Եւ ժամանակ զերկոտասան ժամս ա-  
սէ զաւուրն և զգիշերոյն. և զչորս յե-  
ղանակս տարւոյն. և աւուրս՝ զընթացս  
արեգականն ասէ չ Ծ Ծ չ. և տարի՝  
որ տանի զերկոտասան ամիսն և զԾ Թ,  
չաբաթսն և զչ Ծ Կ Ե աւուրսն : Եւ  
նորօք՝ զվարս և զկեանս մահկանա-  
ցուացս : Եղ զնոսա ՚ի հաստատութիւն  
երկնից : Ոչ անշարժապէս կառուցեալ,  
և ոչ ոտիւք վազեալ. ոչ թևօք թռու-  
ցեալ, և ոչ ըստ Նրայնոցն լողեալ : Այլ  
արեգականն որպէս զանիւ հոլովեալ  
յԱստուծոյ զօրացեալ. և յեղեալ սահ-

մանէն ոչ խոտորեալ և ոչ այսօր ընդ հետս երեկեանն գնացեալ. այլ ամենայն աւուր որիչ ունի յատուկ զճանապարհս գնացից յիւրոց: Յորժամ՝ի հարաւ շարժի արեգակն, սառեալ ցրտանան կողմանք հիւսիսոյ, և ձմեռնային ցրտութիւնն սաստկանայ՝ի միջոցս աշխարհի: Իսկ աշխարհն Հնդկաց և Հայաչից ամառնանայ՝ի պտղահասութիւն: Բայց աման լուսինն է որպէս զերկու թաթ կշռոց եղեալ գէմ իրերաց՝ յարեկից և յարեմոից. ի բաց ունելով զմուտն և զելն. և է ինքն փորամիջոց: Ելանէ լոյսն ընդ դուռն արեմոից և պատի զվերին կողմամբն, թափեալ յամանոյն յերեսաց կուսէ մինչև հասեալ ի դուռն արեկից. և մտանէ ի ներքս ի վայր կոյս թերթովն. երևի գնալով մինչև յեզրն բոլորին: Լուսինն սողալով գնայ ի թռիչս, և արեգակն թաւալմամբ, և աստեղք ոստոստելով: Եւ աստղ կոչին, զի աստ եղեն ի պէտս այսմ աշխարհիս, և անդէն անպիտանան: Շամանդաղն որ կայ յերես լուսինն՝ ասի թէ յաւագ ուրբաթու խաւարմանէ է մնացեալ նշան, վկայ չարչարանացն Քրիստոսի: Արեգակն ստեղծաւ յառաւօտուն և ծագեցաւ. և դեռ ևս ծագէ ի նմին ժամուն: Իսկ լուսինն և աստեղք յերեկոյին ստեղծան, լուսինն՝ Ժ ան աւուր ստեղծաւ, և Ժ ան օր պակաս քան զարեգակն զտարին իւր վճարէ. և այն է որ յամէն տարի Ժ ան, թիւ ի վերադիրն յաւելուն: Ընթացք արեգականն առնեն զօրն երկոտասան ժամս. և ամէն ժամ է չ մասն. և ամէն օր է ք Ծ Կ մասն: Եւ է գարնանային յեղանակն Դ ան օր և Ի ք, մասն ու կէս. նոյնպէս ամառն և աշունն այսքան թվովս են: Իսկ ձմեռն ունի Դ ք օր. և Էր վասն. զի չորից եղանակաց մասունքն ի կատարումն տարւոյն՝ ժողովին և լինին Դ մասն. որ են ք ժամբ. և յամէն ք տարի լինի օր մի, և այն առնէ զնահանջն. և ի Հայոց վերադիրն օր մի պակասեցնէ և զգարնանամուտն օր մի յառաջ խաղացնէ. և զիետրվարի ամիսն Ի Թ, օր առնէ, մինչ ի յայս

օրս որ գարնանամուտ է. և հասարակ օրն ու գիշերն: Եւ այս մասունքն որ զայս առնեն՝ զձմեռն Դ ք օր և Ի ք մասն ու կէս զուգեն: Եւ թէ ընդ որ երթայ արեգակն ի գիշերն. Սողոմոն ասէ. թէ պատի ընդ հիւսիսիւ, և գայ ի սեղի իւր. ի հիւսիսային կողմանն՝ ներքև աշխարհիս անցանէ: Այսմ վկայէ և Անանիա վարդապետն մեր Շիրակուանցին. որ ետես զարեգակն ի նմանութիւն գեղեցկատիպ պատանեկի, և ասաց նմա. Ընդ որ գնաս. և նա ասաց՝ ի ներքև աշխարհիս անցանեմ: Եւ այս է ճշմարիտն. <sup>1</sup> թէպէտ և այլ և այլ ազգասեն՝ անհալ ամպով ծածկեալ, և կամ մեծամեծ լերանց յետոյ անցանելով ծածկի արեգակն: Եւ այս ևս գիտելի է, զի երկինքն զարդուքն իւրովք՝ այս է աստեղզքն՝ յարեկից յարեմուտս չրջի. բայց եթէ մոլորականքն՝ յարեմոից յարեկիս երթան. և վկայ այսմ բանի լուսինն՝ որ յարեմուտս նորի և յարեկիս բոլորի: Այլ երկինքն իւր արագ չրջազայտութեամբն զնոսա յարեկից յարեմուտս տանի. ի ներքև աշխարհիս անցանէ և յարեկիս հանէ: Եւ գիտելի է, զի երկիրս ի մէջ փորուածոց ի կախ է՝ որպէս ձրւի դեղնուցն ի մէջ սպիտակուցին: Եւ այնպէս հաստատեալ կայ բանին Աստուծոյ՝ ի փառս արարչին:

Այլ և այս ևս գիտելի է. զի ընդ լինել արեգականն և աստեղք արարան: Այսպէս և ընդ ծնանիլն Քրիստոսի՝ դապք արդարոցն և սրբոց, ի նմանութիւն աստեղաց հաւատովք որդիացեալքն Աբրահամու բաղմացան ի փառս Քրիստոսի արեգականն արդարութեան: Ձի զոր Աբրահամու ի չորրորդ դարուն խոստացաւ Աստուած՝ անդ մասնաւոր և աստ լիապէս կատարեցաւ ի Քրիստոս: Եւ որպէս ի չորրորդ աւուրն խորհրդակցութիւն չարին ընդ օձին եղև, և դաւ օձին ընդ Եւայի, այսպէս ի չորեքշաբաթի օրս հրեշտակա-

<sup>1</sup> Ըստ կարծեաց ժամանակին կամ միամբոսցումանց:

պեան Գարրիէլ ընդ սուրբ կուսին Մարիամու խօսեցաւ՝ և ետ աւետիս յըզանալոյն զՔրիստոս : Եւ դարձեալ յաւուր չորերչարաթի՛ր եղև խորհուրդ մատնութեանն Քրիստոսի : Զի զնաց Յուդա առ Հրէայան՝ և ասաց նոցա . թէ զինչ կամիր տալ ինձ՝ և ես մատնեցից զՅիսուս ՚ի ձեռս ձեր . և նորա խոստացան նմա տալ չարծաթ՝ առ ՚ի մատնել զնա նոցա : Զի փրկութիւն մեր՝ կառարի շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ մերոյ :

Կը շարունակուի :

### ԵՏՐՈՒՐԱԿԱՆ ԴԱՄՐԱՆՆԵՐ

Նյա 'ւանիկ գայցէ և ժամ՝ զի առ վայրօքն արգիւնագործ Չերկիրն ՚ի կորափիա առնելն արօք ակօսարեկ՝ Ուտնասայ ակգ և նիզակս՝ ՚ի բրա խոժու գայցէ ժանգէն, կամ թէ թափուր սաղաւարտս ընդ անարի բախեալ արքմուխ Պակնուցու շիրմացն ՚ի բիբ ընդ սակրտօին սոսկալիթխար :

ՎիրԳԻԻՒՈՍ . Մշակ . Ա .

Վիրգիլիտօսի այս ըսածն հիմա տեղւ վը կը կատարուի, ուր որ ինքը կը նշանակէր սակերաց հետ մէկտեղ արօքը, խոփը, բահը և բրիչը, երկրիս խորերէն դուրս կը հանեն ետրուրական հին քաղաքականութեան ձեռագործները . և կը յայանեն աշխարհի անհետացած ժողովրդեան մը բնակարանքն և անոնց տընական կենաց կահքն ու կարասին, որ մեզմէ հազարաւոր տարիներ առաջ ապրեր է . այնպիսի ժողովրդեան մը, որ խոսալից մէջ Հռովմայեցւոցմէ շատ առաջ անուանի եղեր է, որուն քաղաքականութեան թաղուած արձանքն հիմա դուրս կ'ելլեն :

Չերվէզրի գիւղին մօտ, որ Հռոմէն վեց փարսախ հեռու է, հին ժամանակները Չերէ կամ Ակիւլլա անուանով ետրուրական քաղաքը կար, ուր փորելով շատ գերեզմաններ գտնուեցան . կ'երեւայ թէ այն դաշար Չերէի գերեզմանատեղին եղած ըլլայ :

Չերէ կամ Կերէ հին Ետրուրից քա

ղաքը այն տեղը կ'ընկնէր, ուր էր Ակիւլլա պեղատեան ամենահին գաղթականութիւնը : Մարտնտիտօսի թագաւորութեան մայրաքաղաքն եղաւ և ետրուրական ցեղապետութեան (Lacumone) զլիսաւոր տեղին էր . գանձ մ'ունէր ՚ի Գելիիս Ակիլլեցւոց անուամբ : Ալլիոյ յաղթուելէն ետքը, 390 տարի առաջ քան զհասարակ թուականն, Հռովմայեցիք այս տեղ փոխադրեցին իրենց սրբազան սպասները, Գաղղիացւոց յափշտակութենէն ազատելու համար :

Հիմա այս տեղն է որ Չերվէզրի կը կոչուի :

Ետրուրացւոց ծագումն ու պատմութիւնը, որոնք Հռովմայեցւոց տիրապետութենէն առաջ խոսալից զանազան ժողովրդոց մէջ երևելիներէն մէկն եղած էր, մթութեան քողին տակ ծածկուած էր . և հիմա փոխանակ դրեանց իրենց դամբանները կը խօսին նոյն ժողովրդեան վրայ, և կը ցուցնեն որ քաղաքակրթութեան մէջ ինչ աստիճան առաջ զնացեր են : Յամին 1835 քանի մը պեղմունք ՚ի լոյս հանեցին Ապադուկէ ըսուած երկրին վրայ Ակիւլլայի գերեզմանատեղին . և թուրքիա իշխանը, որ նոյն երկրին տէրն էր, քանի չափ անօթ դտաւ այն գերեզմանաց մէջ, և մեծ բազմութիւն մը ականակուա զարդերու, զորոնք Հռովմայ Գրիգորեան ըսուած թանգարանին պարգևեց : Նոյն պէս յամին 1836 ընդարձակ գերեզման մ'ալ գտնուեցաւ Քրիստոսէ եօթն կամ ութ դար առաջ շինուած, և Զէնտ-Աւետայի՝ խորհրդական նշաններով բարձրաբանդակ մեծ միտալ մը, Միհր չասուածոյն խորհրդական սլատկերներով և զարդերով նկարուած շատ անօթներ և արուեստական ուրիշ առար

1 Այսպէս կ'անուանեն Պարսից մողերը իրենց սրբազան գրքերէն մէկն՝ սրուն գրութիւնը Չրազաւին իրենց մեծ օրինագրին կ'ընծայեն : Զէնտ-աւետա և Բաւէնք ըսուած կրօնական գրոց մէկնութիւնն՝ կը կազմեն կրօնապաշտօնէան բովանդակ գրութիւնը :